ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

4001, ք. Իջևան Նալբանդյան փողոց 1/1, հեռ. 0263- 4-08-41, 4-00-43, էլ. փոստ՝ tavush@court.am

№ ԴԴԱ-15-Ե-2583Դ/25

«22» դեկտեմբեր 2025թ.

ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՂԵԿԱՎԱՐ
ՊԱՐՈՆ ՆԱԻՐԻ ԳԱԼՍՏՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Գալստյան,

Տեղեկացնում եմ Ձեզ, որ ՀՀ Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 2025 թվականի տարեկան նախահաշվում կատարված փոփոխություններով պայմանավորված անհրաժեշտություն է առաջացել.

1. 4231 տնտեսագիտական դասակարգման հոդվածով՝

- թարգմանչական ծառայությունների մատուցման թիվ 10 պայմանագրից՝ «Մարալ Զաքարյան» ԱՁ, նվազեցնել 12550 ՀՀ դրամ, արդյունքում պայմանագրի գումարը կդառնա 137450 ՀՀ դրամ,

2. 4214 տնտեսագիտական դասակարգման հոդվածով՝

- փոստային կապի ծառայությունների մատուցման թիվ PDU-125-01-25 պայմանագրից՝ «Հայփոստ» ՓԲԸ, նվազեցնել 2948620 ՀՀ դրամ, արդյունքում պայմանագրի գումարը կդառնա 26074180 ՀՀ դրամ,
- հեռախոսակապի ծառայությունների մատուցման թիվ 112845520s4002/25 պայմանագրից՝ «Տելեկոմ Արմենիա» ՓԲԸ, նվազեցնել 52740 ՀՀ դրամ, արդյունքում պայմանագրի գումարը կդառնա 647260 ՀՀ դրամ,

Խնդրում եմ Ձեզ հանձնարարել համապատասխան ստորաբաժանմանը «Քլիենթ Թրեժիր» ծրագրով հաստատել դրական եզրակացություններ:

Առդիր՝ «01» թերթ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝
ՂԵԿԱՎԱՐ **Ա.ԺԱՄՀԱՐՅԱՆ**

Կատարող՝գլխավոր հաշվապահ
Արմինե Եգանյան

Լրացուցիչ համաձայնագիր թիվ 2

19.02.2025թ.-ին կնքված թիվ PDU-125-01-25
Փոստային ծառայությունների մատուցման
պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին

ք.Երևան **02 .12.2025թ.**

«ՀԱՅՓՈՍՏ» փակ բաժնետիրական ընկերությունը, որը հիմնադրվել է Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն, գրանցված է և գտնվում է Հայաստանի Հանրապետություն, ք.Երևան 0061, Արշակունյաց 65/5 հասցեում և հանդիսանում է Հայաստանի Հանրապետության փոստային կապի նշանակված ազգային օպերատոր (այսուհետ՝ նաև՝ «Ընկերություն»)՝ ի դեմս Կորպորատիվ Հաճախորդների սպասարկման և փոստային պրոդուկտների վարչության ղեկավար Գուրգեն Բաղդասարյանի, մի կողմից, ով գործում է Ընկերության գլխավոր գործադիր տնօրենի՝ 26.06.2025թ.-ի թիվ Լ-ԵԼ-ՀՓ/261-25 Լիազորագրի հիման վրա, և Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը (այսուհետ՝ նաև՝ «Հաճախորդ» կամ «Պատվիրատու»)՝ ի դեմս աշխատակազմի ղեկավար Արման Ժամհարյանի, մյուս կողմից, (այսուհետ՝ Ընկերությունը և Հաճախորդը միասին կհիշատակվեն որպես «Կողմեր») կնքեցին սույն լրացուցիչ համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

Ընկերությունը և Հաճախորդը համաձայնության են գալիս 19.02.2025թ.-ին կնքված թիվ PDU-125-01-25 Փոստային կապի ծառայությունների մատուցման պայմանագրում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1. Պայմանագրի 3.3 կետով սահմանվում է բառից հետո 29 022 800 (քսանինը միլիոն քսաներկու հազար ութ հարյուր) ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն բառերը փոխարինել 26 074 180 (քսանվեց միլիոն յոթանասունչորս հազար մեկ հարյուր ութսուն) ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ բառերով:
2. Սույն լրացուցիչ համաձայնագիրը հանդիսանում է 19.02.2025թ.-ին կնքված թիվ PDU-125-01-25 Փոստային կապի ծառայությունների մատուցման պայմանագրի անբաժանելի մասը:
3. Սույն լրացուցիչ համաձայնագիրն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում կնքման պահից:
4. Սույն լրացուցիչ համաձայնագիրը կազմված է հայերեն, հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող 2 (երկու) օրինակից: Համաձայնագրի 1 (մեկ) օրինակը մնում է Ընկերության մոտ, իսկ 1 (մեկ) օրինակը տրվում է Հաճախորդին:
5. Կողմերի իրավաբանական հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները.

Ընկերություն՝

«Հայփոստ» ՓԲԸ
ք.Երևան, 0061, Արշակունյաց 65/5
ՀՎՀՀ՝ 02507464
«Կոնվերս Բանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 1930003703156000
Հեռ.՝ (010) 544-444

Պատվիրատու՝

Տավուշի մարզի առաջին ատյանի ԸԻԴ
ք. Իջևան, Նալբանդյան 1/1
ՀՎՀՀ՝ 02583241
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ՝ 900371001281
Հեռ.՝ (0263) 4-08-41

Կորպորատիվ Հաճախորդների սպասարկման և
փոստային պրոդուկտների վարչության
ղեկավար՝

Գուրգեն Բաղդասարյան ----------
/ստորագրություն/

Աշխատակազմի ղեկավար՝

Արման Ժամհարյան ----------
/ստորագրություն/